**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-23-9/17-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** 04.08.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, ով գործում է «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 31.05.2023թ.կնքված № ԳՀԱՊՁԲ-23-9/17-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 3,748,960 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 11.12.2023թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում ոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք.Երևան, Շիրակի 1/68 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Այ Դի Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 11815019046000 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02606482 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Մ. ՄԱՑԱԿՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-9/17-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Գնման առարկայի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | Չ/Մ | Քանակ | միավորի գինը (ՀՀ դրամ) | գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ ոչ ուշ քան 05.12.2023թ. |
| 11 | 33691176/11 | այլ դեղորայք | լորնօքսիկամ lornoxicam | հատ | 1,500 | 1748.44 | 2,622,660 | 1,500 |
| 42 | 33631310/3 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | դիկլոֆենակ (դիկլոֆենակի նատրիում), diclofenac (diclofenac sodium) | հատ | 15,000 | 21.7 | 325,500 | 15,000 |
| 87 | 33191580/3 | բժշկական օգնության միջոցներ | բիլաստին bilastin | հատ | 5,600 | 143 | 800,800 | 5,600 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-9/17-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | |
| | | | | երրորդ եռամսյակ | չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 11 | 33691176/11 | այլ դեղորայք | լորնօքսիկամ lornoxicam | 2,622,660 | 2,622,660 |
| 42 | 33631310/3 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | դիկլոֆենակ (դիկլոֆենակի նատրիում), diclofenac (diclofenac sodium) | 325,500 | 325,500 |
| 87 | 33191580/3 | բժշկական օգնության միջոցներ | բիլաստին bilastin | 800,800 | 800,800 |
| Ընդամենը | | | | | 3,748,960 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ տնօրեն |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Մ. ՄԱՅԱԿՅԱՆ |